§5.3. ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ՄԵՋ

Ցուցադրման թեման պատկերավոր ու ամբողջական ներկայացնելու համար շատ կարևոր է ինչպես տեսաինֆորմացիան, այնպես էլ տեքստային, գրաֆիկական և ձայնային ինֆորմացիան տեղաբաշխելու ունակությունը:

Ցուցադրման մեջ առկա տեքստային ինֆորմացիան կարող է հետևյալ տեսակի տարրեր պարունակել.

- ✓ սովորական տեքստ,
- ✓ վերնագիր,
- ✓ ենթավերնագիր,
- ✓ նիշավորված տեքստ:

Տեքստ ներմուծելու և խմբագրելու ձեզ հայտնի գործընթացը *PowerPoint*-ում չենք քննարկի, քանի որ *Font* և *Paragraph* ներդիրներում դրան ուղղված կոճակներից մի մասի նշանակությունը ձեզ արդեն հայտնի է *Word* տեքստային խմբագրիչից:

Ցուցադրման մեջ առկա *տեքստի վերնագիրը ներմուծելու* (*խմբագրելու*) համար անհրաժեշտ է նախ դրա համար համապատասխան տիրույթ ընտրել, ապա ներմուծել (խմբագրել) անհրաժեշտ վերնագիրը: Ակտիվացված համապատասխան տիրույթի շուրջն առաջացած կետագծերով եզրագծված ուղղանկյունը՝ կողմերի և անկյունների վրա նշիչներով (նկ. 5.7.) վկայում է, որ աշխատում եք տեքստ խմբագրելու ռեժիմում:

Նկ. 5.7. Վերնագրի տիրույթի տեսքը խմբագրման ռեժիմում

Հաճախ անհրաժեշտ է լինում ցուցադրման մեջ եղած տեքստի առանձին հատվածներ (օրինակ՝ ցուցակներ) *համարակալել* կամ *նիշավորել*: Որպես կանոն, նիշավորված տեքստի յուրաքանչյուր տողի կամ հատվածի սկզբում *կետանշան* (*bullet*) է դրվում, որը *PowerPoint*-ում կարող է նախապես ընտրված պայմանանշան կամ գրաֆիկական պատկեր լինել:

Տեքստի նշված հատվածը համարակալելու համար անհրաժեշտ է.

- ⇨ ընտրել *Home* ներդիրի *Paragraph* խմբի (*Numbering*) կոճակը,
- ⇨ բերված պատուհանից ընտրել անհրաժեշտ ձևը (նկ. 5.8.):

Տեքստի նշված հատվածը նիշավորելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել *Home* ներդիրի *Paragraph* խմբի (*Bullets*) կոճակը,
⇨ բերված պատուհանից ընտրել անհրաժեշտ կետանշանը (նկ. 5.9.):



Նկ. 5.8. Համակալման ձևի ընտրություն



Նկ. 5.9. Նիշավորման ձևի ընտրություն

Տեքստից համարակալումը կամ նիշավորումը հանելու համար անհրաժեշտ է.

⇨ նշել տեքստի համապատասխան հատվածը,
⇨ ընտրել *Home* ներդիրի *Paragraph* խմբի համապատասխան (*Numbering* կամ *Bullets)* կոճակը:

Հաճախ անհրաժեշտ է լինում սլայդին մակագրություն կցել:
Սլայդին մակագրություն կցելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել *Insert* ներդիրի *Text* խմբի (*Text Box*) կոճակը,
⇨ մկնիկի ձախ սեղմակը սեղմած վիճակում ցուցիչը տեղաշարժելով՝ մակագրության համար համապատասխան չափի ուղղանկյուն տիրույթ գծել,
⇨ ստեղծված տիրույթում ներմուծել մակագրությունը:

Սլայդները հաճախ նաև աղյուսակներ են պարունակում:
Սլայդում աղյուսակ ստեղծելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել *Insert* ներդիրի *Tables* խմբի (*Table*) կոճակը,
⇨ ձախ սեղմակը սեղմած վիճակում բացված պատուհանում (նկ. 5.10. ա)) մկնիկի տեղաշարժմամբ ընտրել ստեղծվող աղյուսակի չափը՝ տողերի և սյուների քանակները: Աղյուսակի չափերը կարելի է տալ նաև բերված պատուհանում (նկ. 5.10. ա)) ընտրելով *Insert Table* հրամանն ու բացված համանուն պատուհանի (նկ. 5.10. բ)) *Number of columns* դաշտում ներմուծելով ստեղծվող աղյուսակի սյուների քանակը, *Number of rows* դաշտում՝ տողերի քանակն ու վերջում սեղմելով *OK* կոճակը:





ա) *բ)*

Նկ. 5.10. Աղյուսակի ստեղծում

ա) տողերի և սյուների քանակների ընտրություն մկնիկի շարժմամբ
բ) տողերի և սյուների քանակների ընտրություն

Սլայդում ստանդարտ տեսքի պատկերներ նկարելու համար անհրաժեշտ է.

- ⇨ ընտրել *Insert* ներդիրի *Illustations* խմբի (*Shapes*) կոճակը,
- ⇨ բերված պատուհանում (նկ. 5.11.) ընտրել համապատասխան պատկերն ու մկնիկի ձախ կամ աջ սեղմակը սեղմած վիճակում ցուցիչը տեղաշարժելով՝ նկարել:



Նկ. 5.11. Գրաֆիկական պատկեր ընտրելու պատուհան



Նկ. 5.12. Նշիչներով ուղղանկյուն պատկեր

Ստեղծված պատկերի շուրջը *պատկերի չափերը փոփոխելու* ու այն *պտտելու* նշիչներով ուղղանկյուն շրջանակ է առաջանում (նկ. 5.12.):

Պատկերի չափերը փոփոխելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել պատկերը,

⇨ մկնիկի ցուցիչը տեղադրել չափերը փոփոխելու նշիչներից անհրաժեշտի վրա ու այն երկկողմ սլաքի տեսք ստանալուն պես մկնիկի ձախ կամ աջ սեղմակը սեղմած տեղաշարժելով՝ փոփոխել:

Պատկերը տեղաշարժելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել պատկերը,

⇨ մկնիկի ցուցիչը տեղադրել օբյեկտի տիրույթի եզրագծի վրա ու այն քառակողմ սլաքի տեսք ստանալուն պես ձախ կամ աջ սեղմակը սեղմելով՝ տեղաշարժել:

Պատկերը պտտելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել պատկերը,

⇨ մկնիկի ցուցիչը տեղադրել պտույտի նշիչի վրա ու այն սլաքով շրջանի տեսք ստանալուն պես ձախ կամ աջ սեղմակը սեղմելով ու մկնիկը տեղաշարժելով՝ պտտել:

Ցուցադրման մեջ առկա պատկերների համար կարելի է համապատասխան ոճ ընտրել:

Պատկերի ոճն ընտրելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել օբյեկտը,

⇨ ընտրել *Home* ներդիրի *Drawing* խմբի (*Quick Styles*) կոճակն ու բերված պատուհանից (նկ. 5.13.) ընտրել համապատասխան ոճը:

Սլայդի տիրույթների չափերը փոփոխելը, տեղաշարժելը, պտտելն ու ոճն ընտրելը կարելի է իրականացնել այնպես, ինչպես պատկերների դեպքում:



Նկ. 5.13. Պատկերի ոճի ընտրության պատուհան